

Չևրբխ հևրբղ

Կալիֆոռնիայի Գլխավոր դատախազը հանրային հանդիպում կանցկացնի հեռուստակոնֆերանսի միջոցով, որը սկսվելու է **2020** թվականի հոկտեմբերի **8**-ին, ժամը **10:00**-ին **PDT**-ով՝ Հանթինգթոնի հիվանդանոցի և **Cedars-Sinai**-ի առաջարկվող միավորման վերաբերյալ:

Ի պատասխան **COVID-19**-ի սպառնալիքի, նահանգապետ Նյուսոմը արձակեց **N-33-20** գործադիր հրամանը, համաձայն որի Կալիֆոռնիայում հայտարարվեց Արտակարգ դրություն և, որ Կալիֆոռնիայի բոլոր բնակիչները պետք է մնան տանը կամ իրենց բնակության վայրում, բացառությամբ անհրաժեշտ դաշնային կարևոր ենթակառուցյունների հատվածների՝ դրանց չընդհատվող գործունեությունը պահպանելու համար: Նահանգապետ Նյուսոմը նաև արձակեց **N-25-20** և **N-29-20** գործադիր հրամանագրերը, որոնք Գլխավոր դատախազին թույլ են տալիս հանրային հանդիպում անցկացնել հեռուստակոնֆերանսի միջոցով՝ առանց ֆիզիկական գտնվելու վայրը տրամադրելու, որտեղից հասարակության անդամները կարող են դիտել հանդիպումը և առաջարկել հրապարակային մեկնաբանություններ:

Հանրային հանդիպումը հասարակությանը հասանելի կլինի հեռախոսային և էլեկտրոնային եղանակով: Հանրության անդամները կարող են ունկնդրել հանրային հանդիպումը, կամ՝ դրա փոխարեն կարող են դիտել, լսել և մեկնաբանություն առաջարկել ստորև ներկայացված մեթոդների միջոցով:

Հանրային հանդիպման մասին այս ծանուցումը տեղադրված է Գլխավոր դատախազի կայքում՝ BlueJeans-ի միջոցով անցկացվող տեսակոնֆերանսի միջոցով հանրային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ հղումներով և ցուցումներով: <https://oag.ca.gov/charities/nonprofithosp>:

Հանդիպման ընթացքում բոլոր մասնակիցների ձայնը կլռեցվի մոդերատորի կողմից: Դուք չեք կարողանա ձեռքով անջատել կամ միացնել ձեր գծերի ձայնը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Համակարգչով՝ **Google Chrome** վեբ դիտարկիչի կամ BlueJeans Events հավելվածի միջոցով

Լավագույն փորձի համար BlueJeans-ն առաջարկում է օգտվել **Google Chrome** վեբ դիտարկիչից կամ անվճար ներբեռնել [BlueJeans Events](#) [հավելվածը](#):

Այն հնարավորություն կտա մասնակիցներին դիտել, լսել և մեկնաբանություն առաջարկել հանրային հանդիպման ընթացքում: Մասնակիցը կարող է մեկնաբանություն թողնել գրույցի միջոցով կամ կարող է բանավոր մեկնաբանել հետևյալ հղման միջոցով՝

<https://primetime.bluejeans.com/a2m/live-event/trhqctx>

Բանավոր մեկնաբանություն առաջարկելու համար կենդանի շփման համար հարցում կարող եք ուղարկել հետևյալ կերպ.

1. Ընտրելով Ձեռք բարձրացնել պատկերակը ձեր էկրանի աջ անկյունում:
2. Ընտրելով Շարունակել՝ մոդերատորի հաստատումից հետո:
3. Այնուհետև դուք կհերթագրվեք:

Խնդրում ենք սպասել՝ մինչև մոդերատորը ձեզ մեկնաբանության թույլտվություն տա: Այդ ժամանակ մոդերատորը կմիացնի ձեր խոսափողի ձայնը: **Մեկնաբանությունն անելու համար դուք պետք է խոսափող ունենաք:**

Շարժական սարք

Բջջային հեռախոսի կամ գրասալիկի և այլ շարժական սարքերի միջոցով մասնակիցը կարող է դիտել, լսել և մեկնաբանություն առաջարկել հանրային հանդիպման ընթացքում, եթե նա ներբեռնի **BlueJeans** հավելվածը:

Շարժական սարքով կարող եք միանալ հետևյալ հղման միջոցով: Այս տարբերակի համար պահանջվելու է BlueJeans հավելվածի ներբեռնում, այն թույլ կտա մասնակցին դիտել հանրային հանդիպումը և առաջարկել հրապարակային մեկնաբանություն: Մասնակիցը կարող է մեկնաբանություն թողնել կամ գրույցի պատուհանի միջոցով, կամ խոսելով: Եթե մասնակիցը չներբեռնի BlueJeans հավելվածը, նա կկարողանա միայն լսել, իսկ մեկնաբանություն առաջարկել չի կարողանա:

ա) Անցեք այս հղումով՝ <https://primetime.bluejeans.com/a2m/live-event/trhqctx>

բ) Եթե դեռ չեք տեղադրել հավելվածը, ներբեռնեք այն:

զ) Մուտքագրեք միջոցառման ID-ն՝ trhqctx

Հեռախոս

Հեռախոսի միջոցով մասնակիցը կարող է միայն լսել հանրային հանդիպումը, բայց չի կարողանա դիտել կամ մեկնաբանություն առաջարկել:

Հավաքեք հետևյալ համարներից մեկը՝
+1 (415) 466-7000 (ԱՄՆ)

PIN՝ 7994100 #

Երկրորդական՝
+1 (760) 699-0393 (ԱՄՆ)

PIN՝ 6432707455 #

BlueJeans աջակցում

BlueJeans-ի հնձորների ապավանհումը՝ +1 (408) 791-2830
Մասնակիցները կարող են նաև աջակցում ստանալ հետևյալ կայքից՝ <https://support.bluejeans.com>

Հանրային հանդիպման նպատակը

Հանրային հանդիպումների նպատակն է մեկնաբանություններ լսել Հանրինգթոնի հիվանդանոցի և **Cedars-Sinai**-ի առաջարկվող միավորման վերաբերյալ:

Մարդիկ կարող են առաջարկվող գործարքի վերաբերյալ իրենց տեսակետները գրավոր ներկայացնել Կալիֆոռնիայի Գլխավոր դատախազության գրասենյակին հետևյալ էլ. հասցեով՝ Anita.Velasco@doj.ca.gov, ֆաքսով՝ **(916) 731-3652** կամ ուղարկելով փոստով Գլխավոր դատախազի տեղակալին՝ Անիտա Գարսիա Վելասկոյին, հետևյալ հասցեով **300 S. Spring Street, Los Angeles, CA 90013**: Գրավոր մեկնաբանությունների ընդունման վերջնաժամկետը՝ **2020** թվականի հոկտեմբերի **8**, ժ. **17:00**: